Գ. Սիմոնյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.72
ՀԱՆ-ԳՀԾՁԲ-13/20

ք. Երևան «24» 07. 2020 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ **Պատվիրատու**), մի կողմից և «Նուռտել» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Օ.Ղևոնդյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պոմպերի, կափույրների, ծորակների և մետաղական կոնտեյներների և սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

Գ. Սիմոնյան

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման

իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2275000 (երկու միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, Մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1,1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	«Կատարող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	«Նուռտել» ՍՊԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք. Երևան, Մոսկովյան 31
Ի.Գասպարյան 33	<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	ՀՎՀՀ 02585505
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ	Հ/Հ 16043201908300
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն _____Ա.Գասպարյան	Տնօրեն _____Օ.Ղևոնդյան

Հավելված N 1
«29» 07. 2020 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԾՁԲ-13/20 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	վերջնաժամկետը
1	50511100/1	տե՛ս հավելված 1.1	դրամ	315000	1	Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ	31.12.2020
2	50511900/1	տե՛ս հավելված 1.1	դրամ	315000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020
3	50511900/2	տե՛ս հավելված 1.1	դրամ	270000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020
4	50511900/4	տե՛ս հավելված 1.1	դրամ	250000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020
5	50531240/1	տե՛ս հավելված 1.1	դրամ	450000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020
6	50531240/2	տե՛ս հավելված 1.1	դրամ	270000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020
7	50531240/5	տե՛ս հավելված 1.1	դրամ	405000	1	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	31.12.2020

«Պատվիրատու»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**

«Կատարող»
«Նուռտել» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>
ՀՎՀՀ 02585505
Հ/Հ 16043201908300

Տնօրեն _____ **Օ. Ղևոնդյան**

Հավելված N 1.1
«24» 07. 2020 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀՇՁԲ-13/20 ծածկագրով պայմանագրի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	50511100/1	Պոմպերի վերանորոգման-պահպանման ծառայություններ՝ ջրի հորքային պոմպի վերանորոգման ծառայություն	Ջրի հորքային պոմպը գտնվում է <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ին պատկանող Հեռավոր Օբյեկտների Կենտրոնում՝ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ: Աշխատանքը իր մեջ ներառում է 50 մետր խորությունում գտնվող ջրի հորքային պոմպը ապամոնտաժել, նորոգել և տեղադրել: Ջրի հորքային պոմպի ապամոնտաժման, նորոգման և տեղադրման համար անհրաժեշտ սարք սարքավորումները և նյութերը պետք է ապահովի կատարողը իր միջոցներով և իր հաշվին: Հորքային պոմպի տեխնիկական հատկանիշներ. • Անվանական հզորություն --- 13կՎտ, • Անվանական լարում --- 400Վ, • Արտադրություն --- Եվրոպական, • Արտադրողունակությունը ժամում --- 25խմ,
2	50511900/1	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի վերանորոգում՝ 2 կցորդիչներով,	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի՝ 2 կցորդիչներով վերանորոգում, և մինչև 5մ բարձր լարման մալուխի ներդիրի տեղադրումով նորոգման ծառայություններ: • <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող վնասված մալուխների վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի բարձր լարման վնասված մալուխների թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում

			փոխարինման ենթակա հանգույցների վերաբերյալ թերությունների ակտ: • Պատվրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, երկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: • Ծառայությունների իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվում բարձր լարման վնասված մալուխների վերանորոգման նպատակահարմարության գրավոր հաստատումից սկսած 5 աշխատանքային օրը: • Բարձր լարման վնասված մալուխների վերանորոգման համար անհրաժեշտ սարք սարքավորումների և փոխարինվող հանգույցների ապահովումը պետք է իրավականացնի կատարողը՝ իր միջոցներով և իր հաշվին:
3	50511900/2	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի վերանորոգում՝ 1 կցորդիչներով	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի՝ 1 կցորդիչներով վերանորոգման ծառայություններ: • <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող վնասված մալուխների վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի բարձր լարման վնասված մալուխների թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում փոխարինման ենթակա հանգույցների վերաբերյալ թերությունների ակտ: • Պատվրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, երկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: • Ծառայությունների իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվում բարձր լարման վնասված մալուխների վերանորոգման

			նպատակահարմարության գրավոր հաստատումից սկսած 5 աշխատանքային օրը: • Բարձր լարման վնասված մալուխների վերանորոգման համար անհրաժեշտ սարք սարքավորումների և փոխարինվող հանգույցների ապահովումը պետք է իրականացնի կատարողը՝՝ իր միջոցներով և իր հաշվին:
4	50511900/4	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված ցածր լարման մալուխի վերանորոգում՝ 2 կցորդիչներով	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված ցածր լարման մալուխի 2 կցորդիչներով և մինչև 5մ ցածր լարման մալուխի ներդիրի տեղադրումով վերանորոգման ծառայություններ: • <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող վնասված մալուխների վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի ցածր լարման վնասված մալուխների թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում փոխարինման ենթակա հանգույցների վերաբերյալ թերությունների ակտ: • Պատվրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, երկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: • Ծառայությունների իրականացման առավելագույն ժամկետ է սահմանվում ցածր լարման վնասված մալուխների վերանորոգման նպատակահարմարության գրավոր հաստատումից սկսած 5 աշխատանքային օրը: • Ցածր լարման վնասված մալուխների վերանորոգման համար անհրաժեշտ սարք սարքավորումների ապահովումը պետք է իրականացնի կատարողը՝ իր միջոցներով և իր հաշվին:
5	50531240/1	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ ՎՄԳ10 բարձր լարման

		ծառայություններ՝ ՎՄԳ10 բարձր լարման յուղային բջիջի անջատիչի և հաղորդակի վերանորոգում	յուղային բջիջի անջատիչի և հաղորդակի վերանորոգման ծառայություններ: • ՎՄԳ10 բարձր լարման յուղային բջիջը գտնվում է Արագածոտնի մարզ, գյուղ Եղիպատրուշում: • <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող ՎՄԳ10 բարձր լարման յուղային բջիջի անջատիչի և հաղորդակի վերանորոգման անհրաժեշտության առաջացման դեպքում Կատարողը 2 օրվա ընթացքում պատվիրատուին պետք է ներկայացնի թերությունների ուսումնասիրության և անհրաժեշտության դեպքում փոխարինման ենթակա հանգույցների գների վերաբերյալ թերությունների ակտ: • Պատվիրատուն թերությունների ակտը ստանալուց հետո, մեկօրյա ժամկետում Կատարողին պետք է ներկայացնի իր գրավոր համաձայնությունը կամ անհամաձայնությունը Կատարողի կողմից իրականացվելիք ծառայությունների վերաբերյալ: • Պատվիրատուի կողմից գրավոր համաձայնություն ստանալուց հետո սպասարկող ընկերությունը պարտավոր է 24 ժամվա ընթացքում սկսել վերանորոգման աշխատանքները: • ՎՄԳ10 բարձր լարման յուղային բջիջի անջատիչի և հաղորդակի վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ սարք սարքավորումների և փոխարինվող հանգույցների ապահովումը պետք է իրավականացնի կատարողը՝ իր միջոցներով և իր հաշվին:
6	50531240/2	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ նոր բետոնե հենասյան՝ իր հենակով և մեկուսիչներով, փոխարինման ծառայություններ	• <<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող 10կՎ օդային գծերի տեղակայման վայրերը՝ • Արմավիրի մարզ, Էջմիածնին հարակից Ոսկեհատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արարատի մարզ, Հովտաշատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ փայտյա և երկաթբետոնե

			հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաքի հարակից տարածքում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արագածոտնի մարզ, գյուղ Եղիպատրուշից դեպի Մռավյան օբյեկտ(2800մ բարձրություն) տեղակայված է 10կՎ օդային գիծ՝ փայտյա, երկաթբետոնե և մետաղյա հենասյուներով, AC70 հաղորդալարերով: • Կոտայքի մարզ, գյուղ ֆանտանին հարակից գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: Վթարի դեպքում հնարավոր վերականգնողական աշխատանքների տեսակները՝ • Հենասյան վնասվելու կամ կոտրվելու դեպքում տեղադրել նոր բետոնե հենասյուն՝ իր հենակով և մեկուսիչներով: • Փոխարինվող նյութերի և հանգույցների ապահովումը պետք է իրավականացնի Կատարողը՝ իր միջոցներով և իր հաշվին: • Փոխարինվող նյութերը և հանգույցները պետք է լինեն նոր և չօգտագործված: • Տվյալ չափաբաժնի ծառայությունով նախատեսվում է իրականացնել 1 վերականգնողական աշխատանք:

7	50531240/5	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ նոր բետոնե A-տիպի վերջնային խարսխային հենասյան փոխարինման ծառայություններ	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ նոր բետոնե A-տիպի վերջնային խարսխային հենասյան փոխարինման ծառայություններ: <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ պատկանող 10կՎ օդային գծերի տեղակայման վայրերը՝ • Արմավիրի մարզ, Էջմիածնին հարակից Ոսկեհատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արարատի մարզ, Հովտաշատ գյուղում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ փայտյա և երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաքի հարակից տարածքում գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Արագածոտնի մարզ, գյուղ Եղիպատրուշից դեպի Մռավյան օբյեկտ(2800մ բարձրություն) տեղակայված է 10կՎ օդային գիծ՝ փայտյա, երկաթբետոնե և մետաղյա և A-տիպի վերջնային խարսխային հենասյուներով, AC70 հաղորդալարերով: • Կոտայքի մարզ, գյուղ Ֆանտանին հարակից գտնվում է 10կՎ օդային գիծ՝ երկաթբետոնե հենասյուներով, AC70 հաղորդալարերով, A-տիպի վերջնային խարսխային հենասյունով և 10կվ գծային բաժանիչով: • Վթարի դեպքում հնարավոր վերականգնողական աշխատանքների տեսակները՝ • A-տիպի վերջնային խարսխային հենասյան

			վնասվելու կամ կոտրվելու դեպքում տ[illegible] համարժեք A-տիպի վերջնային [illegible] հենասյուն: • Փոխարինվող նյութերի և [illegible] ապահովումը պետք է իրավականացնի [illegible] իր միջոցներով և իր հաշվին: • Փոխարինվող նյութերը և հանգույցնե[illegible] լինեն նոր և չօգտագործված: • Տվյալ չափաբաժնի ծառայությունով նա[illegible] է իրականացնել 1 վերակա[illegible] աշխատանք:

«Պատվիրատու»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**

«Կատարող»
«Նուռտել» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>
ՀՎՀՀ 02585505
Հ/Հ 16043201908300

Տնօրեն _____ **Օ. Ղևոնդյան**

Հավելված N 2
«24» 07. 2020 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀՄՁԲ-13/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50511100/1	Պոմպերի վերանորոգման-պահպանման ծառայություններ՝ ջրի հորքային պոմպի վերանորոգման ծառայություն	315000	315000	315000	315000	315000	315000
2	50511900/1	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի վերանորոգում՝ 2 կցորդիչներով,	315000	315000	315000	315000	315000	315000
3	50511900/2	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված բարձր լարման մալուխի վերանորոգում՝ 1 կցորդիչներով	270000	270000	270000	270000	270000	270000
4	50511900/4	Մալուխների կցորդիչների վերանորոգման ծառայություններ՝ մեկ վնասված ցածր լարման մալուխի վերանորոգում՝ 2 կցորդիչներով	250000	250000	250000	250000	250000	250000
5	50531240/1	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ ՎՄԳ10 բարձր լարման յուղային բջիջի անջատիչի և հաղորդակի վերանորոգում	450000	450000	450000	450000	450000	450000

6	50531240/2	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ նոր բետոնե հենասյան՝ իր հենակով և մեկուսիչներով, փոխարինման ծառայություններ	270000	270000	270000	270000	270000	270000
7	50531240/5	Էլեկտրական բաշխիչ սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ նոր բետոնե A-տիպի վերջնային խարսխային հենասյան փոխարինման ծառայություններ	405000	405000	405000	405000	405000	405000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

«Պատվիրատու»
<<Հայէլեկտրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**

«Կատարող»
«Նուռտել» ՍՊԸ
ք. Երևան, Մոսկովյան 31
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>>
ՀՎՀՀ 02585505
Հ/Հ 16043201908300

Տնօրեն _____ **Օ. Ղևոնդյան**

Հավելված 3
«24» 02 2020թ. կնքված
***ՀԱՆ-ԳՀԾՁԲ-13/20** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«24» 07 2020թ. կնքված
***ՀԱՆ-ԳՀԾՁԲ-13/20** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն